միջավայրի ունեցած դերի անորոշությունը ստիպում է ավելի զգուշորեն վերաբերվել ծախս-օգուտ ստանդարտին: Մարդկանց տարբեր նպատակները, որոնք առնչվում են նաև շրջակա միջավայրին, կարող են փոխել նորդասականների կողմից տրված շրջակա միջավայրի հետագա պատկերը:

2. Որոշ այլընտրանքային տեսակետներում առաջադրվում է այն հարցը, թե սպառողական նախասիրությունների վրա հիմնված համակարգերը կարելի՞ է արդյոք տեղին համարել բնապահպանական հարցերի վերլուծության ժամանակ: Գոյություն ունեն արժեքներ, որոնք մարդկանց կողմից են տրված շրջակա միջավայրի տարրերին և արժեքներ, որոնք գտնվում են հենց շրջակա միջավայրի տարրերի մեջ և մարդկանց կողմից չեն տրված: Դժվարությունը, որը առաջացնում է այդ տարբերությունը, պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջինն այն է, որ մարդիկ, իրականում, իրենք են տալիս այդ ներհատուկ արժեքը՝ իրենց նախասիրությունը փոխանցելով բնական միջավայրի տարրերին: Եթե սա մարդկային նախասիրությունների արտահայտման ձև է, ապա «օբյեկտ-սուբյեկտ» և «ներհատուկ» արժեքների միջև տարբերությունը մնում է հիմնավոր, սակայն ոչ այնքան կարևոր գլոբալ որոշումներ կայացնելու համար: Մյուս խնդիրն այն է, որ սոցիալական գործողությունների համար նախապայմանները կարող են հիմնված լինել մարդկանց չպատկանող իրավունքների վրա: Կենդանիների իրավունքների պաշտպանները առանց բարդության կարող են պնդել, որ մարդկանց գործողությունները պետք է մասնավորապես առաջնորդվեն ոչ մարդ արարածների իրավունքներով: Մյուսներն անիմաստ են համարում այնպիսի իրավունքների մասին խոսելը, որոնք չեն պատկանում մարդկանց:

3. Շատ աշխատություններում շրջակա միջավայրի համար տնտեսական վերլուծությունների ունեցած դերը կասկածի տակ է դրվում: «Աճի սահմաններ» ուսմունքի կողմնակիցները գտնում են, որ տնտեսաէկոլոգիական ընդարձակված մոդելը ցույց կտա, որ տնտեսական աճը, ինչպես ավանդաբար ընդունվում էր, կայուն չի լինի: Մյուսներն այն կարծիքին էին, որ տնտեսական աճը կատարելապես իրագործվել է, սակայն դրան հասնելու ուղիները տարբերվում են՝ հաշվի առնելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները: Օրինակ՝ աճը կարող է հիմնված լինել ավելի շատ վերականգնվող ռեսուրսների օգտագործման, և ավելի քիչ՝ սպառվող ռեսուրսների շահագործման վրա: Կարող է, սակայն, գոյություն ունենալ բարձր տեխնոլոգիական տնտեսություն, որի աճը հիմնված կլինի ռեսուրսների շատ քիչ օգտագործման և բարձր տեխնոլոգիաների կիրառման վրա:

Տնտեսություն- շրջակա միջավայր փոխներգործության ավելի խորը ըմբռնումը թույլ կտա առավել լավ հասկանալ վերը նշված բոլոր տեսությունները:

ԱՐԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Մարդուն պարգևած *մտածելու ընդունակությունը* հնարավորություն է տալիս նրան ճանաչել իրեն և շրջապատը, տարբերակել իր գոյության և գոյատևման հնարավոր մոտեցումները, դրանց համեմատության հիմքի վրա ընտրելով լավագույնները՝ ավելի բարձր կենսամակարդակ ապահովել իր համար, շրջապատին հարմարվելու ավելի կատարյալ եղանակներ գտնել, շարունակական զարգացում ունենալ: Ընտրելու հնարավորությունը և այդ հատկության շարունակական զարգացումը, կարծում ենք, մարդակերպին շնորհված մտածելու ընդունակության կիրառման լավագույն ուղղությունը և արդյունքը կարելի է համարել:

Մարդը բնությունից օժտված է նաև *գործելու կարողությամբ*, ունի իր գոյատևման համար անհրաժեշտ տարաբնույթ ռեսուրսներով հարուստ բնական կենսամիջավայր, ինչպես նաև այդ ռեսուրսներից օգտվելու և դրանք օգտագործելու հնարավորություն: Իսկ մտածելու բնածին ընդունակությունն ու այդ հիմքի վրա ձևավորված աշխատելու կարողությունը նրան հնարավորություն է ընձեռում ուղղորդել իր գործողությունները, նպատակահարմար ձևով օգտագործել մտածելու՝ իրեն շնորհված հնարավորությունը, ծառայեցնել այն իր պահանջմունքներն ավելի բարձր մակարդակով բավարարելու խնդրի լուծմանը: Այս շարունակական գործընթացը մարդու մոտ զարգացրել և ենթագիտակցությունում ամրագրել է իր *գործողությունները գիտակցված կատարելու պահանջը և ձգտումը*:

Մարդու կողմից իրականացվող ցանկացած գործողություն պետք է գիտակցված լինի, քանի որ վերարտադրության պահանջը բնազդորեն հանգեցնում է որևէ նպատակով կատարվող գործողությունում նույն արդյունքի համար ծախսել հնարավոր քիչ էներգիա, որը գոյատևման պայմանով վերարտադրվելու է: Իսկ դա նշանակում է, որ այդ գործողությունները պատահական, ինքնաբերաբար, չնախատեսվող չեն, այլ ծառայելու են ինչ-որ արդյունքի ստացման, որի կարիքն ունի տվյալ անհատը: Այսինքն՝ նրա կողմից կատարվող ծառայությունները *նպատակային-արդյունքային* են: Հակառակ դեպքում դրանք արդարացված չեն, հավանական է նաև, որ պատճառ կարող են հանդիսանալ այդ անհատի համար որոշ կորուստների: Մարդ անհատի պարագայում, որպես մտածելու ընդունակություն ունեցող էակի, այդ նպատակային գործողությունները նաև մտածված, այսինքն՝ գիտակցական պետք է լինեն: Հետևաբար, *նպատակայնությունը և բարձր արդյունքայնությունը* գիտակցված գործունեության անհրաժեշտ պայմաններ և այն իրականացնելու հիմնարար սկզբունքներ են:

Սակայն դա ինքնաբերաբար կամ ինքնահոս ձևով չի իրագործվում, այն իրողություն դառնալու համար անհրաժեշտ այլ պայմաններ և գործողություններ են պահանջվում: Նպատակադրումն ու դրա իրագործման արդյունավետ ուղու ընտրությունը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ առկա պայմաններից, գործունեության օբյեկտների և սուբյեկտների առանձնահատկություններից, դրանց հնարավորություններից, հնարավոր շահառուների կազմից և պահանջներից, արտաքին ազդեցությունների ուղղվածությունից ու չափերից: Այսինքն՝ նպատակայնության և արդյունավետության պայմանների իրականացումը առավել ևս դրա բարձր մակարդակի ապահովումը կախված կլինի պայմանավորող գործոնների փաստացի առկա համախմբի տեսակից, կազմից, քննարկվող խնդրի էությունից և առանձնահատկություններից: Եվ սա այն դեպքում, եթե մշակված և գործնականում փորձարկված են տվյալ խնդրի լուծման նպատակադրման և արդյունավետ տարբերակի ընտրության՝ գիտականորեն հիմնավորված, պահանջվող ճշգրտություն ապահովող և կիրառելի մեթոդական մոտեցումներ, ինչպես նաև դրանք կիրառելու մասնագիտական հմտություններ:

Նշենք նաև, որ մարդկային գործունեությունը գիտակցված լինելու կամ այդպիսին համարվելու այս երկու բնութագիր-պայմանները՝ նպատակայնությունն ու արդյունավետ լինելը, շատ դեպքերում, կախված գործունեության նպատակաուղղվածությունից, կարող են որոշակի ձևով փոխկապված, իրար փոխլրացնող կամ պայմանավորող, ինչպես նաև նախապես սահմանված ու անպայմանորեն իրագործելի լինեն: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ կարող է ստեղծել հիմնավորված նպատակադրում և իրագործման արդյունավետ տարբերակի ընտրություն կատարելու գործում, քանի որ անհրաժեշտ կհամարվի նախապես բացահայտել և առանձնացնել այդպիսի կապերի տեսակներն ու փոխազդեցության կամ փոխպայմանավորման ձևերն ու մեխանիզմները, նկատի ունենալ դրանք խնդրի լուծման գործընթացներում: Հասկանալի է, որ այդ նպատակի համար ևս անհրաժեշտ են համապատասխան մեթոդական մոտեցումներ և կիրառություն:

Բերված դատողություններից հետևում է, որ նպատակային-արդյունավետ գործունեության պարադիգմի իրագործման աստիճանը տարբեր պայմաններում տարբեր կարող է լինել: Դա հնարավոր է նույնիսկ այն դեպքերում, երբ խնդիրն ու պայմանները նույնն են, սակայն տարբեր են նպատակադրող կամ նպատակն իրագործող սուբյեկտների գիտակցական մակարդակները և առկա մեթոդական մոտեցումների մասին նրանց տեղեկատվությունն ու օգտագործման հնարավորությունները:

Մյուս կողմից, մարդկային հասարակության գոյատևումն ու զարգացումը ապահովելու գործում գիտակցված գործունեության մեծ կարևորությունը անհրաժեշտ է դարձնում դրա իրականացումը իր հիմնարար պարադիգմի պահանջներին համարժեք ձևով: Ուստի առաջանում է խնդիր, թե ինչ գործոններ են ապահովում այդ համարժեքության բարձր մակարդակը, ինչ միջոցառումներով է հնարավոր այն ապահովել և ինչ ձևով կարելի է վստահ լինել, որ իրականացվող գործունեությունը իսկապես գիտակցված է, այսինքն՝ համապատասխանում է պարադիգմի պահանջներին:

Այս խնդրի ճիշտ դրվածքը, դրա ընդունելի լուծման ձևավորումը և գործնական լայն կիրառությունը գիտակցված գործունեության համակարգի կարևորագույն տարրը կարող են հանդիսանալ: Դրա լուծման ճշգրտությունից, հիմնավորվածությունից, նաև կիրառման հնարավորությունից և տարածվածությունից մեծապես կախված կլինի նաև մարդկային գիտակցված գործունեության որակը, հետևաբար և դրա արդյունք հանդիսացող մարդկության զարգացման ինտենսիվությունն ու ակնկալվելիք մակարդակը: Այն հիմք կդառնա տնտեսագիտությունում *մարդկային գործունեության գիտակցվածության աստիճան* կամ *մարդու գիտակից գործելու հնարավորություն* հասկացությունների ներմուծման, դրանց էության սահմանումներ ձևավորելու և քանակական գնահատման մոտեցումներ մշակելու համար: Ուստի, կարծում ենք, խնդրի հետազոտությունը պետք է արժանանա գիտական հասարակայնության և հանրային կառավարման մարմինների համապատասխան ուշադրությանը, ստանա իր լուծումը:

Գործունեություն իրականացնելու, դրա նպատակը և իրագործելու արդյունավետ եղանակը ձևավորելու, հիմնավորելու կամ ընտրելու համար անհրաժեշտ է դրանց էությանն առնչվող բավարար ընդգրկման գիտելիք ունենալ, որի ճիշտ կիրառությունը կդառնա այդ գործունեության հիմքը, այն կդարձնի իրավամբ գիտակցված: Ուստի նպատակային և արդյունավետ գործելու կամ, այլ կերպ, գործունեության բարձր գիտակցվածության մակարդակ ապահովելու հիմնական պայմանն այդ գործունեությունը նպատակադրող և իրականացնող սուբյեկտների մոտ դրա վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքի առկայությունն ու դրա ճիշտ օգտագործումն է, տվյալ գործունեությունը գիտելիքի հիմքի վրա իրականացնելն է, այսինքն՝ դրա գիտելիքահենքության բարձր մակարդակի ապահովումն է:

Այս պահանջը բնականոն է, այն ուղղակիորեն բխում է մարդու մտածող էակ լինելու և գիտակցված գործելու կարողություն ունենալու իրողությունից: Ուստի կարելի է ենթադրել, որ դրա իրագործումը նույնպես տեսականորեն իրողություն կարելի է համարել մարդակերպի գոյության՝ մինչ այժմ եղած ողջ ժամանակաշրջանում: Սակայն այդ «իրողության» հիմքում եղել է այն մակարդակով գիտելիքի պաշարը, որը գոյություն է ունեցել գործող յուրաքանչյուր մարդկային առանձին հանրությունում կամ անհատի մոտ:

Գիտելիքը գործունեության օբյեկտի, սուբյեկտի, նպատակի, դրան հասնելու գործողությունների մասին տվյալներն ու պատկերացումներն են: Թվարկած այս երևույթ-հասկացությունները գործունեության՝ իրականում հանդիպող կամ հնարավոր տարբեր դեպքերում խիստ տարբեր արտահայտություններ կարող են ունենալ, ինչպես նաև յուրաքանչյուրի վերաբերյալ շատ տարբեր պատկերացումներ կարող են ձևավորվել: Որպես դրա հետևանք, կախված վերը թվարկած յուրաքանչյուր երևույթի առանձնահատկություններից՝ հնարավոր են նաև գիտելիքի տարբեր կազմ, պաշար կամ մակարդակ մարդկային տարբեր հանրություններում, ինչպես նաև դրանցում ներառված անհատների մոտ: Ընդ որում, մարդկության գոյության սկզբնական շրջանում պարզունակ և աղքատիկ այդ գիտելիքը ժամանակի ընթացքում մարդու գիտակցված գործունեության արդյունքում մարդկային հասարակության զարգացման հետ համընթաց՝ շարունակաբար աճել և զարգացել է քանակապես

և իր մակարդակով՝ աստիճանաբար ավելի ու ավելի ադեկվատ ձևով արտահայտելով այն իրողությունները, որոնց ճանաչմանն ու օգտագործմանն է ծառայել այն:

Գիտելիքի զարգացման հետ բարձրացել է նաև գործունեության գիտելիքահենքության մակարդակը, սակայն ոչ նույն չափով ու ինտենսիվությամբ տարբեր տարածաշրջաններում: Այդ աճը միանման չի եղել նաև նույնանման գործունեության տարբեր ոլորտներում: Հասկանալի է, որ մարդկային հանրությունների առանձնացվածության և դրանցում ներառված անհատների անձնական տարբեր հնարավորությունների պայմաններում խիստ տարբեր է եղել նաև դրանց գործունեության գիտելիքահենքային մակարդակը: Սակայն այդ տարբերությունները մարդկային հասարակությունների զարգացման և ինտեգրման, ինչպես նաև գործունեության գլոբալացման պայմաններում աստիճանաբար կրճատվել են, բայց չեն վերացել: Գիտելիքահենքության մակարդակի համահարթեցման գործընթացը դեռ շարունակվելու է հետագա ժամանակաշրջաններում, ընդ որում, առավելապես գլոբալացման ազդեցության շնորհիվ, սակայն հազիվ թե իրատեսական լինի ենթադրել, որ նշված տարբերությունները տեսանելի հեռանկարում կվերանան ամբողջովին: Ողջ մարդկային հասարակությունում միանման գիտելիքահենքության մակարդակ ունենալուն խանգարում են բազմաթիվ պատճառներ, որոնցից որպես կարևորներ նշենք, օրինակ, շուկայական հարաբերությունների պայմաններում գիտելիքի ապրանքային էությունը, դրա նկատմամբ սեփականության իրավունքը, գիտելիքի ստեղծման և օգտագործման բազմակենտրոն լինելը և պահանջվող երկար ժամանակահատվածը, նոր գիտելիքի փոխանցումն ու տարածումը այլ հանրություններում՝ ոչ համընդհանուր ընդգրկումով կամ ոչ միաժամանակ կատարելու հանգամանքը և այլն:

Չնայած դրան՝ գիտելիքի ծավալի և ընդգրկման ինտենսիվ մեծացումը, մարդկային գործունեության գիտելիքահենքության մակարդակի բարձրացումը և ինչպես հասարակությունների, տարածաշրջանների, այնպես և սուբյեկտների միջև տարբերությունների աստիճանական հարթեցումը բավարար հիմք են արդեն, որպեսզի մարդկային ցանկացած գործունեություն իրականացվի գիտելիքահենքության բարձր մակարդակով:

Գիտակից հասարակություններում այժմ արդեն համընդհանուր է այն համոզմունքը, որ այժմյան և հետագա ժամանակաշրջաններում մարդկության զարգացման հիմնական ուղղությունը գործունեության գիտելիքահենքության մակարդակի հնարավոր ինտենսիվ բարձրացումն է: Մարդկությունն անցնում է *գիտելիքահենք տնտեսության* (knowledge based economy), ձևավորվելու է մի տնտեսական համակարգ, որում ամենուրեք և ամեն ինչում հանրային կամ առանձնացված մարդկային գործունեությունը պետք է գիտելիքի վրա հիմնված և գիտելիքով հիմնավորված լինի: Այսպիսի մոտեցման արդարացիությունն ու հիմնավորվածությունը լիովին ապացուցվում են մարդու գիտակից էակ լինելու փաստով և մարդկային տրամաբանությամբ, գիտակցված գործունեության հիմնարար պարադիգմի բովանդակությամբ և պահանջներով: Այն մարդկային ողջ հասարակության հետագա նպատակահարմար զարգացումն ապահովելուն ուղղված առավել հիմնարար և հիմնավորված գաղափարն է[1]: Այդ գաղափարը մշտապես գտնվելու է ողջ մարդկության, դրա առանձին հատվածների, խմբերի և անհատների ուշադրության կենտրոնում, առաջնորդելու է նրանց բոլոր գործողություններում, հանդիսանալու է նրանց զարգացման հիմքը:

Ստորև կներկայացնենք որոշ դատողություններ *գիտելիքահենք տնտեսությանն անցնելու գաղափարի* շուրջ: Նախ անվանումի ձևակերպման մասին: Վերը շարադրվածից հետևում է, որ գիտելիքահենքության պահանջը՝ որպես մտածող մարդուն հատուկ բնութագիր, առանց կոնկրետացնելու, թե ինչ գիտելիք է հիմքում դրվելու, մշտապես առկա է եղել մարդկանց գործողություններում: Ուստի «անցում գիտելիքահենք տնտեսության» արտահայտությունը, առավել ևս որպես հետագա զարգացման բնութագիր, կարծում ենք, ոչ բավարար ադեկվատությամբ է արտահայտում գաղափարի բովանդակությունը: Վերջինն ավելի շատ *տնտեսության գիտելիքային հենքի զարգացումն* է նկատի ունենում, որը նպաստելու է *գործունեության գիտելիքահենքության արդյունավետությունը* բարձրացնելուն: Նկատի ունենալով երևույթների կամ հասկացությունների անվանումների հաճախակի փոփոխումների բացասական ազդեցությունը դրանք ընկալելու և ճիշտ օգտագործելու գործընթացների վրա, չենք կարծում, որ *գիտելիքահենք տնտեսություն* լայն տարածում ստացած արտահայտության փոխարեն դիտարկվող գաղափարին մի նոր, իր էությանն ավելի համարժեք անվանում տալը նպատակահարմար կլիներ: Այն պահպանելով, պետք է միայն ավելի ճշտորեն սահմանել դրան վերագրվող բովանդակությունը, տալ միանշանակ մեկնաբանություններ:

Հաջորդ խնդիրը *գիտելիքահենքության գաղափարի գիտական կարգավիճակի* ճիշտ ընկալումն է: Եթե գիտելիքահենք գործունեությունը հատուկ է մարդակերպին, այն ոչ թե ժամանակավոր, թեկուզ և խիստ կարևոր սկզբունք է, այլ մշտական գործելակերպ է, իրողություն է եղել մարդկության գոյատևման և զարգացման ողջ ընթացքում, եղել է և շարունակելու է մնալ այդ զարգացման հիմնական գործոններից մեկը: Հետևաբար այն կայուն օրինաչափություն է, իր էությամբ տնտեսագիտական օրենք, ուստի և հաշվի պետք է առնվի մարդկային գիտակցված գործունեության ցանկացած փուլում, դրվի զարգացման ծրագրերի հիմքում: Այսպիսի կարգավիճակի սահմանումը, որի նպատակահարմարությունն ու օգտակարությունը, ըստ մեզ, կասկածի տեղիք չպետք է տա, կպարտադրի համապատասխան մարմիններին՝ ձևավորել այդ գաղափարին, դրա գիտագործնական զարգացմանն ու կիրառմանն իր կարևորությանն ու բովանդակությանը համարժեք ուշադրություն դարձնել և իրագործման նկատմամբ համապատասխան հսկողություն կիրառել: Դա նշանակում է, որ գիտելիքահենքությունը պետք է դառնա կառավարման օբյեկտ, այդպիսի կառավարման ապահովումն ու գործառույթների բարձրորակ կատարումը համարվելու է կառավարման մարմինների պարտականություն, որի համար նրանք համապատասխան իրավասություններ պետք է ունենան և չկատարելու դեպքում համարժեք

[1] Տես՝ Բ.Եղիազարյան. Գիտելիքահենք տնտեսությանն անցման հիմնախնդիրները. Գիտական հոդվածների ժողովածու-8 [50]

պատասխանատվություն պետք է կրեն: Այս բոլորի շնորհիվ, կարծում ենք, զգալի տնտեսական արդյունքներ կարող են ապահովվել:

Մարդկային ամեն մի գործողություն կամ գործունեություն գիտելիքի հիմքի վրա իրականացնելու պահանջի բնականոն լինելու և բարձր հիմնավորվածություն ունենալու հանգամանքը ցուցում է, որ այն համընդհանուր կիրառություն պետք է ունենա, որպես բնութագիր՝ օգտագործվի ցանկացած այն գործունեության դեպքում, որը գիտելիքահենքության որոշակի մակարդակ ունի: Վերջինս որոշակիացնելու համար անհրաժեշտ կլինի օգտագործել մակարդակի դասը արտահայտող բնութագիր, օրինակ՝ բարձր, ցածր կամ այլ՝ կախված գիտելիքահենքության մակարդակի համար ընդունված դասակարգման բնույթից և տվյալ գործունեությունում առկա գիտելիքահենքության փաստացի իրողությունից:

Տերմինաբանական որոշակիության նպատակով կարելի է պայմանավորվել, որ եթե գործունեության գիտելիքահենքության բնութագրում չի նշվում մակարդակը, ապա այդ անվանման տակ միանշանակ պետք է ենթադրվի բավարար մակարդակի գիտելիքահենքության առկայություն:

Գիտելիքահենքությունը՝ որպես ամեն մի գործունեության կարևոր բնութագիր համարելը, հետևաբար նաև որպես համընդհանուր կիրառության տերմին-հասկացություն ընդունելը, հիմք կարող է ծառայել այդ բնութագրով առանձնացվող հասկացությունների ամբողջական համակարգ ձևավորելու համար: Վերջինիս յուրաքանչյուր մակարդակում ներկայացված կլինեն դրա վերադաս մակարդակի գիտելիքահենք համարվող հասկացությունների կառուցվածքավորման (տրոհման) արդյունքում առանձնացվող բաղադրիչ ենթահասկացությունները, որոնք ևս որպես գիտելիքահենք են որակավորվում: Ընդ որում, այդ համակարգում որպես *հասկացություններ* կարող են ներառվել այն բոլոր *օբյեկտները*, որոնք կարող են բնութագրվել գիտելիքահենքության տեսանկյունից: Այդպիսիք են, օրինակ, հասարակություն, տնտեսություն, կենսակերպ, գործունեություն, գործընթաց, փոփոխություններ, ժամանակաշրջան, հարաբերություններ, տեսություն և այլ հասկացությունները: Համապատասխանաբար կձևավորվեն և կառանձնացվեն դրանց գիտելիքահենք տեսակը արտահայտող հասկացություններ, ինչպես, օրինակ, *գիտելիքահենք հասարակություն, գիտելիքահենք տնտեսություն, գիտելիքահենք կենսակերպ, գիտելիքահենք գործունեություն, գիտելիքահենք տեսություն, գիտելիքահենք հարաբերություններ* և այլն: Յուրաքանչյուրում իր հերթին կարող են առանձնացվել դրա բաղադրիչներ հանդիսացող հասկացությունների գիտելիքահենք տեսակները:

Համակարգի վերին մակարդակը զբաղեցնելու է առավել ընդհանրական հասկացությունը (օրինակ՝ գիտելիքահենք հասարակություն կամ դարաշրջան): Հաջորդ մակարդակում այն տրոհվում է այդ հասկացության՝ իրենց էությամբ և ուղղվածությամբ առանձնացվող ենթահասկացություն-բաղադրիչների, որոնք դառնում են գիտելիքահենք հասկացությունների համակարգի երկրորդ մակարդակի ենթահամակարգեր: Շարունակելով ենթահամակարգերի տրոհումը իրենց ստորադաս մակարդակներում մինչև ենթահամակարգերի ամենաստորին (այլևս չտրոհվող) մակարդակի ձևավորումը՝ կստանանք գիտելիքահենք հասկացությունների համակարգի հիերարխիկ պատկերը: Այն թույլ կտա որոշել ցանկացած գիտելիքահենք հասկացության տեղն ու դիրքը այդ համակարգում, ինչը թույլ կտա ինչ-որ չափով ու ձևով որոշակիացնել նաև հասկացության կապերն այլ հասկացությունների հետ, որոշել այդ կապերի միջնորդավորվածության աստիճանը:

Գիտելիքահենքության բնութագրի համընդհանրությունն ու հնարավոր կիրառությունը ցանկացած երևույթի դեպքում հանգեցնում է նրան, որ նշված համակարգը, փաստորեն, ներառելու է համարյա բոլոր հասկացությունները: Այդպիսի ընդգրկումով համակարգի ձևավորումը մեծ դժվարությունների հետ է կապված, ուստի դրա գործնական իրականացումն իր ամբողջական ծավալով հազիվ թե նպատակահարմար համարվի: Կարծում ենք՝ ավելի ընդունելի կարելի է համարել ամբողջական համակարգի որոշակի հատվածների առանձնացված ձևավորումը՝ դրանք կոնկրետ խնդիրների համակարգված լուծումներ ստանալու համար օգտագործելու նպատակով: Այդպիսի առանձնացված հատվածներ կարելի է համարել ամբողջական համակարգի առանձին ճյուղի կամ մակարդակի, ինչպես նաև դիտարկվող կոնկրետ երևույթին առնչվող հասկացությունների խմբի համար կազմվող նպատակահենք հասկացությունների մասնակի համակարգերը, որոնք կարելի է անվանել *նպատակային*:

Գիտելիքը՝ որպես գործունեության օբյեկտի, սուբյեկտի, նպատակի, դրա իրագործմանը ուղղված միջոցառումների ու իրականացման գործողությունների մասին տվյալներ և պատկերացումներ, մեծապես պայմանավորված է ինչպես նախկինում ստեղծված գիտելիքի պաշարով, այնպես և դիտարկվող դեպքի համար պահանջվող պատկերացումները ձևավորող սուբյեկտի գիտելիքային մակարդակով, այն օգտագործելու հնարավորություններով ու կարողությունով և այլ առանձնահատկություններով: Ուստի գիտելիքի տեսակների թվաքանակը շատ մեծ կարող է լինել: Դա անհրաժեշտ է դարձնում գիտելիքի տեսակների բազմության համակարգում, դասակարգում, կառուցվածքավորում, տիպաբանությունների ձևավորում՝ ըստ տարբեր բնութագրերի և դրանց հնարավոր զուգորդումների, ինչպես նաև կանոնակարգման այլ գործողությունների կատարում, ինչը կպահանջի նպատակային մեծածավալ հետազոտությունների իրականացում:

Նույն ձևով, թվարկած երևույթների տարբերությունների պատճառով տարբեր կլինեն նաև գիտելիքի կիրառման մոտեցումները, և կունենանք դրանց տեսակների մեծ բազմություն: Եվ քանի որ գիտելիքահենքությունը ներկայացնում է գիտելիքի և դրա կիրառման համատեղումը մարդկային գիտակցված գործունեությունում, ապա թվարկած բազմազանության արդյունքում այն վերածվում է մեծ և բարդ մի համակարգի: Դա պայմանավորում է վերջինիս նկարագրի ձևավորման և մակարդակի գնահատման մեծ բարդություններ և տարբեր մոտեցումներ օգտագործելու հնարավորություն: Սակայն չի նվազեցնում նաև գիտելիքահենքության գնահատման կարևորությունը, թեկուզ և միայն պատկերացում ունենալու համար իրավիճակի մասին կամ այն կառավարելու և վերջինիս բարելավման միջոցառումներ մշակելու համար:

Վերջին հաշվով, ցանկացած գործունեություն կոչված է արդյունավետ ձևով իրագործելու առաջադրված նպատակը: Ուստի նախքան գործունեություն սկսելը՝ անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե որքանո՞վ է արդյունավետ այն իրականացնել գիտելիքային հենքի ինչ-որ աստիճանի (կամ մակարդակի) դեպքում: Այդ նպատակով ներմուծվելու են *գիտելիքահենքության աստիճան (կամ մակարդակ)* և *գիտելիքահենքության արդյունավետություն* հասկացություն-տերմինները, պարզորոշվելու և միանշանակ սահմանվելու են դրանց տնտեսագիտական էությունը, մշակվելու են գնահատման մեթոդական մոտեցումներն ու չափորոշիչները: Դրանք հնարավորություն պետք է ընձեռեն կոնկրետ դեպքերում գնահատել գործունեության գիտելիքահենքության մակարդակը և գտնել դրա այն աստիճանը, որը գիտելիքահենքության տեսանկյունից կապահովի տվյալ գործունեության իրականացման ամենաարդյունավետ տարբերակը:

Նկատի ունենալով, մի կողմից, նշված խնդրի բարդությունը և, մյուս կողմից, հիմնավորված լուծումներ ստանալու կարևորությունն ու օգտակարությունը՝ կարծում ենք՝ արդարացված պետք է համարել գործունեության և դրա գիտելիքահենքության գնահատման ամբողջական համակարգի ձևավորումը երկրում: Դրանում նպատակահարմար կլինի գործունեության առավել տարածում ունեցող տեսակների և դեպքերի համար ներառել նաև գիտելիքահենքության աստիճանի գնահատման մեթոդական մոտեցումների կիրառման գիտագործնական ցուցումներ:

Ինչպես նշվեց վերը, որևէ գործունեության գիտելիքահենքությունը այդ գործունեության, դրա օբյեկտի և սուբյեկտի, նպատակի և դրա իրագործմանն ուղղված գործողությունների վերաբերյալ գիտելիքի պաշարն ու դրա օգտագործումն է: Հետևաբար գիտելիքահենքության մակարդակը պայմանավորում են գործունեությունում գիտելիքի ընդգրկումն ու պահանջներին համապատասխանությունը, օգտագործման մոտեցումների հիմնավորվածությունն ու առաջադրված նպատակներին համարժեքությունը: Նկատի ունենալով, որ որևէ երևույթ կամ օբյեկտ գնահատելիս տարբերակվում են գնահատման բնութագրերի կազմի ու դրանց շուրջ տեղեկատվության նկատմամբ *անհրաժեշտ* և *բավարար* քանակային պահանջներ, կարելի է առանձնացնել նաև *գիտելիքահենքության մակարդակի անհրաժեշտ կամ բավարար չափով գնահատում* հասկացությունները: Այսպիսի առանձնացումը և յուրաքանչյուրի էության պարզորոշումը և կիրառման դեպքերի նշումը օգտակար կլինի, քանի որ տարբեր պայմաններում ընդունելի կարող են համարվել գործունեության գիտելիքահենքության գնահատման ճշգրտության տարբեր աստիճաններ, այդ թվում՝ *անհրաժեշտ, բավարար* կամ *բարձր*: Այս հանգամանքը նկատի պետք է առնվի գնահատման համակարգի գործառույթներում: Կարծում ենք՝ դրանցում նպատակահարմար կլինի ներառել նաև *գիտելիքահենքության մակարդակի ստորին նորմատիվային մեծությունների* մշակումն ու կիրառման հանձնարարումը: Այդպիսի սահմանային նորմատիվների օգտագործումը հանրային կառավարման մարմիններում կօժանդակի ընդունվող որոշումների կամ մշակվող ծրագրերի գիտելիքահենքության մակարդակի բարձրացմանը, կխոչընդոտի կամայականության և անձնական շահերը առաջնային դարձնելու դրսևորումները, դրանով իսկ կնպաստի նաև այդ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Նշենք մի հանգամանք ևս՝ մարդու և մարդկային հասարակության անշեղ զարգացման ազդեցությունը գիտելիքահենքության մակարդակի վրա: Այդ զարգացումը հենվում է գիտելիքի պաշարի ավելացման և դրա կիրառության ընդլայնման վրա: Մյուս կողմից, այն պայմանավորում է նաև այդ պաշարի աճն ու ավելի լայն օգտագործումը մարդկության գոյատևման ու զարգացման գործընթացներում՝ դրանք ավելի բարձր գիտելիքահենք դարձնելով: Հետևաբար, մարդկության զարգացման բնականոն համարվող օրինաչափությունը ծնում է *գիտելիքի աճի և գործունեության գիտելիքահենքության բարձրացման նմանատիպ օրինաչափություն*, որը եղել է անցյալում և շարունակվելու է հետագայում: Այսինքն՝ գիտելիքն ու գիտելիքահենքությունը լինելով և մնալով որպես մարդկության գիտակցված գործունեության արդյունք և կարևոր բնութագիր՝ իրենց բովանդակությամբ և մասշտաբային առումով փոփոխվում են, ունեն աստիճանական աճի միտում: Դա նշանակում է, որ գիտելիքահենք գործունեության էությունն ու բնութագրերը նույնպես ենթակա են փոփոխության, ուստի կարիք ունեն որոշակի հաճախականությամբ վերանայման՝ փոփոխված պայմաններին համապատասխանեցման նպատակով: Այստեղից հետևում է նաև, որ գիտելիքահենքության գնահատման համակարգը, եթե այդպիսին ձևավորված է, ևս պարբերական վերանայման և անհրաժեշտ ճշգրտումների կարիք կունենա: Այդպիսի անհրաժեշտությունը հիմնավորվելու է տվյալ ժամանակում տնտեսությունում առկա իրավիճակի և գիտելիքի ու գիտելիքահենքության գնահատման համակարգի բնութագրերի ու նորմերի համապատասխանության մանրակրկիտ վերլուծության և փորձագիտական գնահատման արդյունքով:

Գիտելիքահենքության գնահատման՝ վերը նշված ամբողջական համակարգի ձևավորման խնդրի լուծումը տարաբնույթ դժվարությունների հետ է կապված: Սակայն դրանք անհրաժեշտ է հաղթահարել, քանի որ այդպիսի գնահատումը և այդ հիմքի վրա գործունեության արդյունավետ տարբերակի ճիշտ ընտրությունը տնտեսվարող սուբյեկտների և հասարակության համար զգալի օգուտներ կարող է ապահովել՝ դրանով օժանդակելով տնտեսության զարգացմանը: Մյուս կողմից նշված համակարգի ձևավորումն ու արդյունավետ գործունեությունը նույնպես թելադրվում է գիտելիքահենքության պահանջով, քանի որ գիտելիքի հասարակությունում, որին ձգտում է մարդկությունը, ցանկացած գործունեություն, այդ թվում նաև գիտելիքահենքության գնահատումը և արդյունքների օգտագործումը, պետք է իրագործվեն գիտելիքահենքության սկզբունքով: